Նախագիծ

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՀԱՆՐԱՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

(նախնական տարբերակ)

Երևան 2021

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

MINERVA 2019-2022
Strengthening Research Management and Open Science Capacities of HEIs in Moldova and Armenia

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի հանրահասանելիության քաղաքականությունը մշակվել է Եվրոպական Միության կողմից համաֆինանսավորված «Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտության կառավարման և հանրահասանելի գիտության կարողությունների զարգացում» ԷՐԱՉՄՈՒՍ+ ՄԻՆԵՐՎԱ ("MINERVA-Strengthening Research Management and Open Science Capacities of HEIs in Moldova and Armenia" (Ref. nr.: 597912-EPP-1-2018-1-MD-EPPKA2-CBHE-SP) of Erasmus+, the Key Action 2 Capacity Building in the field of Higher Education) ծրագրի շրջանակներում:

Եվրահանձնաժողովի աջակցությամբ հրատարկված սույն փաստաթղթի բովանդակությունն արտացոլում է միայն հեղինակների կարծիքները, և Եվրահանձնաժողովը որևէ պարտավորություն չի կրում սույն փաստաթղթում ներկայացված տեղեկության օգտագործման համար:

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՊՀ) հանրահասանելիության քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) հիմնված է ստորև ներկայացված սկզբունքների վրա:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Քաղաքականության նպատակն է ապահովել անվճար առցանց հասանելիություն հանրային/պետական ֆինանսական աջակցությամբ իրականացված հետազոտությունների արդյունքներին:
2. Գիտահետազոտական արդյունքների հանրահասանելիությունը (Open Access) հիմնված է գիտելիքի՝ որպես հանրային բարիքի ճանաչման և դրանից բխող սոցիալական ու տնտեսական օգուտների վրա:
3. Գիտահետազոտական արդյունքների լայն ու արդյունավետ տարածումը ԲՊՀ-ի՝ որպես հետազոտական պետական կազմակերպության առանցքային դերակատարումներից է:
4. Հանրահասանելիության ապահովման միջոցով գիտահետազոտական արդյունքների տեսանելիության շրջանակի ընդլայնումը նպաստում է հրատարակումների ազդեցության ընդլայնմանը:
5. Համալսարանական պահոցում արխիվացվող ԲՊՀ գիտահետազոտական աշխատանքներն ապահովվում են դրանց համակարգմամբ, երկարաժամկետ պահպանությամբ, ինչպես նաև նպաստում են ԲՊՀ գիտական արդյունքների հետագա տարածմանը, դրանց ներքին և արտաքին գնահատումների համար անհրաժեշտ հասանելիությանը:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- **Հրատարակումը** (Publication) սահմանվում է որպես հաստատությունում ընդգրկված հետազոտողների գրախոսված և հրատարակված (կամ հրատարակման փուլում գտնվող) աշխատանք (հոդվածներ, մենագրություններ, հատվածներ գրքից, զեկույցներ, գիտաժողովի նյութեր):
- **Հետազոտող** (Researcher) է համարվում ԲՊՀ-ի՝ ցանկացած մակարդակում գործունեություն ծավալող գիտահետազոտական համակազմի անդամ՝ անկախ նրա զբաղվածության կարգավիճակից:
- **ԲՊՀ-ում ստեղծված հանրահասանելի համալսարանական պահոցը** (Institutional Open Access Repository) («Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի համալսարանական պահոց») համապատասխանում է միջազգային չափանիշներին, պարունակում է տարբեր գիտակարգերի վերաբերյալ թվային բովանդակություն և տրամադրում է իր թվային հավաքածուների որոնման հանրահասանելի ու ժամանակակից գործիքներ:
- **Թվային նմուշը** (Digital Copy) նյութի հրատարակման վերջին փուլում գտնվող էլեկտրոնային տարբերակն է (կամ հեղինակի աշխատանքի գրախոսումից հետո առկա վերջնական տարբերակը, կամ հրատարակչի տարբերակը):

- **Հետազոտական տվյալները** (Research Data) վերաբերում են այն տվյալներին (վիճակագրական տվյալներ, փորձարկումների, չափումների ու դիտարկումների արդյունքներ, հարցազրույցի ձայնագրություններ, նկարներ և այլն), որոնք օգտագործվում են գիտական հրատարակումներում ներկայացված գիտահետազոտական արդյունքները հավաստելու համար:
- **Էմբարգոն** (Embargo) այն ժամանակահատվածն է, որի ընթացքում պահոցում ի պահ հանձնվող հրատարակումը կարող է «փակվել» (այսինքն՝ հրատարակումը հասանելի չէ):
- **Մետատվյալները** (Metadata) այն նկարագրիչներն են, որոնք կիրառվում են ի պահ հանձնված նյութը նկարագրելու, հետազծելու, օգտագործելու և կառավարելու համար (մասնավորապես՝ հրատարակման խորագիրը, հեղինակ(ներ)ը, աշխատանքի վայրը, հրատարակումն ընդունած ամսագրի անվանումը):
- **Համապատասխան պահոցը** (Suitable Repository) այն պահոցն է, որն ապահովում է գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրահասանելիությունը, մշտական նույնացուցիչների (DOI կամ այլ) միջոցով հղում կատարելու հնարավորությունը, ինչպես նաև տրամադրում է որակական մետատվյալներ (ներառյալ հետազոտության ֆինանսավորման հավաստումը)՝ հիմնված ընդունելի ուղենիշների և չափանիշների վրա:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- - - թվականից ի վեր ԲՊՀ-ն առաջադրում է հետևյալ պահանջները.

1. ԲՊՀ հետազոտողներն համալսարանական պահոցում ի պահ են հանձնում իրենց բոլոր հրատարակումներին առնչվող մետատվյալները (հեղինակային նյութի վերջնական տարբերակը կամ հրատարակչի տարբերակը)՝ հրատարակմանը ընդունման պահից: Հետազոտողները կրում են իրենց հրատարակումները համալսարանական պահոցում սահմանված ժամկետում ի պահ հանձնելու պատասխանատվությունը:
2. Հրատարակումները ներկայացվում են ամբողջական տեքստային տարբերակով՝ համաձայն 1-ին կետում նշված պահանջի, այն է՝ ապահովել աշխատանքների հանրահասանելիությունը դրանք պահոցում ի պահ հանձնելու պահից սկսած կամ դրանից հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետում: Բոլոր դեպքերում մետատվյալները պետք է հանրահասանելի լինեն: Գրախոսվող հրատարակումների դեպքում ի պահ հանձնված նյութը կարող է փակ մնալ մինչև 6 ամիս (կամ մինչև 12 ամիս՝ հասարակական և հումանիտար գիտությունների ոլորտներում հրատարակվող նյութերի դեպքում): Համաձայն 1-ին կետի B ենթակետի՝ մենագրությունների ի պահ հանձնումը պարտադիր է, բայց դրանց հասանելիությունը փակ է մինչև հրատարակչի էմբարգոյով նախատեսված ժամկետի լրանալը:
3. Ապահովվում է ի պահ հանձնվող ոչ հասանելի («փակ») հրատարակումների ամփոփագրերի հանրահասանելիությունը՝ այդ աշխատանքների տեսանելիության մակարդակը բարձրացնելու նպատակով:

4. ԲՊՀ-ի անդամների գիտահետազոտական աշխատանքների անհատական ու ինստիտուցիոնալ գնահատումների նպատակով բուհն ընդունելի է համարում միայն այն հրատարակումները, որոնց մետատվյալները և ամբողջական տեքստերն ի պահ են թողնված համալսարանական պահոցում՝ վերոնշյալ պահանջներին համապատասխան:
5. ԲՊՀ-ն խրախուսում է հետազոտողներին իրենց հրատարակումներին առնչվող հետազոտական տվյալներն ի պահ հանձնել համալսարանական պահոցում կամ հանրահասանելի տվյալների համապատասխան այլ պահոցում:
6. ԲՊՀ-ն խրախուսում է իր անդամներին պահպանել հեղինակային իրավունքը և հրատարակիչներին վերապահել միայն այն իրավունքները, որոնք անհրաժեշտ են հրատարակման համար:
7. ԲՊՀ-ն խրախուսում է հետազոտողներին համալսարանական պահոցում ի պահ հանձնել այն հրատարակումները, որոնք հեղինակվել են մինչև ընթացիկ քաղաքականության ուժի մեջ մտնելու ամսաթիվը և հնարավորության դեպքում դրանք հանրահասանելի դարձնել:

4. ՀԱՆՐԱՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԲՊՀ-ն՝

1. հանրահասանելիությունն ապահովում է դրան նվիրված սեմինարների, միջոցառումների, իրազեկման բարձրացմանն ուղղված աշխատանքների, կրթության և վերապատրաստումների իրականացման միջոցով:
2. մշտադիտարկում է քաղաքականության համապատասխանությունը՝ պահոցում առկա բովանդակությունն ինդեքսավորման ծառայություններից հավաքագրված տեղեկության, ինչպես նաև օգտագործման վերաբերյալ տեղեկության (մուտքեր, ներբեռնումներ) հետ համեմատելու միջոցով՝ ըստ հրատարակման/բաժնի/միավորի/ ինստիտուտի և այլն:
3. տրամադրում է մարդկային ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են հանրահասանելիության քաղաքականության իրականացման համար:
4. տրամադրում է հղումներ և ստեղծում է այլ տվյալների շտեմարանների (օրինակ՝ Google Scholar) հետ փոխօգտագործման հնարավորություն: